Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
8-րդ դասարան (120 րոպե)

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1.Ի՞նչ անվանվեց Նոյի իջևանած առաջին վայրը. *(0,5 միավոր)*

1) Նախիջևան
2) Երևան
3) Իջևան
4) Էջմիածին

2.Նշված գետերից ո՞րը սկիզբ չի առել Եդեմ-դրախտավայրից. *(0,5 միավոր)*

1) Փիսոն
2) Գեհոն
3) Կուր
4) Եփրատ

3.Հայ Առաքելական Սբ. Եկեղեցին ի՞նչ է անվանում Մարիամ Աստվածածնի երկրային կյանքի վախճանը. *(0,5 միավոր)*

1) Մահ
2) Համբարձում
3) Հարություն
4) Վերափոխում

4. Հայ Առաքելական Սբ. Եկեղեցու ո՞ր թեմն է կոչվում Հայրապետական. *(0,5 միավոր)*

1) Արագածոտն
2) Արմավիրի
3) Արարատյան
4) Արցախի

5.Ուրիշ ի՞նչ անունով է Թադեոս առաքյալը հիշատակվում Ավետարանում. *(0,5 միավոր)*

1) Ղեբեոս
2) Նաթանայել
3) Բարդուղիմեոս
4) Կեփաս

6.Ըստ ավանդության Սբ. Գիրգոր Լուսավորիչը մկրտության ժամանակ ի՞նչ վերանվանեց Տրդատ 3-րդին. *(0,5 միավոր)*

1) Պետրոս
2) Հովհաննես
3) Դավիթ
4) Բարդուղիմեոս

7.Ո՞վ է հիմնադրել Վասպուրականի Նարեկավանքի դպրոցը. *(0,5 միավոր)*

1) Գրիգոր Նարեկացի
2) Անանիա Նարեկացի
3) Խոսրով Անձևացի
4) Սամվել Կամրջաձորեցի

8.Ո՞ւր տեղափոխվեց Հայոց Հայրապետական աթոռը 1149թ.. *(0,5 միավոր)*

1)Էջմիածին
2)Աղթամար
3)Սիս
4)Հռոմկլա

N9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Ավանդաբար եկեղեցիները ունեն_____կամ խաչաձև կառուցվածք: *(1 միավոր)*

10. Տրդատ Գ արքայի մկրտության վայրում պահպանվել է մի քար, որը կոչվում է _____: *(1միավոր)*

11. Գևորգ Գառնեցուց հետո՝ 897 թ., կաթողիկոս է ձեռնադրվում նշանավոր հոգևորական, Սևանի վանքի վանահայր_____: *(1միավոր)*

12. Գագիկ Ա Բագրատունու կինը՝ Կատրամիդե թագուհին, ստանձնում է _____-ի շինարարության հովանավորությունը և տաճարի կառուցումն ավարտում 1001 թ.: *(1միավոր)*

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13.Հայրապետների անունները համապատասխանեցնել իրենց գահակալման տարեթվերին.

1. Սբ. Ներսես Մեծ
2. Անանիա Ա Մոկացի
3. Գևորգ Բ Գառնեցի
4. Խաչիկ Ա Արշարունի

ա.353-373թթ.
բ. 877-897թթ.
գ. 973992թթ.
դ. 946-968թթ.
ե. 898-929թթ.

1	
2	
3	
4	

(1միավոր)

14 .Նշված աշխատությունները համապատասխանեցնել հեղինակներին.

1. «Ժամանակագրություն»
2. «Ազգապատում»
3. «Հայոց Պատմություն»
4. «Եղծ աղանդոց»

ա. Մաղաքիա Օրմանիան
բ.Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ)
գ.Մատթեոս Ուռհայեցի
դ.Եզնիկ Կողբացի
ե.Կիրակոս Գանձակեցի

1	
2	
3	
4	

(1միավոր)

N15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15.Հայոց Եկեղեցու տոները դասավորել ըստ տոնացույցի.

ա. Խաչվերաց
բ. Վարագա Սբ. Խաչ
գ. Տյառնընդառաջ
դ. Սբ. Ծնունդ
ե. Սբ. Հարություն

1	
2	
3	
4	
5	

(1միավոր)

16.Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Ձիրավի ճակատամարտը
բ. Նվարսակի հաշտության պայմանագիր
գ. Վրաց եկեղեցու բաժանումը Արևելյան եկեղեցական ընտանիքից
դ. Աշտիշատի առաջին ժողովը
ե. Միլանի հրովարտակը

1	
2	
3	
4	
5	

(1միավոր)

N 17.

Աշխատանք սկզբնաղբյուրով:

17. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին. *(2միավոր)*

«Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում: Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը»:

1) Ու՞մ աշխատությունից է հատվածը: *(1միավոր)*

_____

2) Ու՞մ մասին է խոսքը:

_____

(1միավոր)

N 18-19

Տերմինների,հասկացությունների,պատճառահետևանքային կապերի,փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկվածներից ո՞ր երկու տարբերակներն են ճիշտ.

1) Փոտ պատրիարքը Աշոտ իշխանաց իշխանին որպես նվեր ուղարկում է Տերունական Խաչափայտի մասունք:

2) Փոտ պատրիարքը դավանական հալածանքներ է սկսում Բյուզանդիայի տարածքում բնակվող հայերի նկատմամբ:

3) 862 թ. Շիրակավանի ժողովը ընդունում է Փոտ պատրիարքի առաջարկը:

4) Աշոտ իշխանաց իշխանը չի մասնակցում 862 թ. Շիրակավանի ժողովին:

5) Փոտ պատրիարքը ցանկանում էր կայսեր օգնությամբ դառնալ Հայոց կաթողիկոս:

(2միավոր)

19.Թվարկվածներից երկուսը Հայ Առաքելական եկեղեցու խորհուրդներից չեն.

1) Մկրտություն
2) Մատաղ
3) Հաղորդություն
4) Ապաշխարություն
5) Մոմավառություն

(2միավոր)

20. Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացնել հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու չարչարանքներն ու մահը, խրատական նշանակությունը հետագա սերունդների կյանքում: